

## ՀԱՎՈՒՅՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՐՏԱՔԻՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԱՊԵՐԸ

### Ե. ԵՍԱՅԱՆ

Հայտնի է, որ մետաղյա գործիքների օգտագործումը ղգալիորեն բարձրացրեց աշխատանքի արտադրողականությունը հողագործության և անասնապահության մեջ, իսկ դա իր հերթին արտադրական հարաբերություններում: Հասարակության տնտեսական կյանքում ծագեցին միանգամայն նոր երևույթներ՝ հավելյալ աշխատանքը և հավելյալ արդյունքը: Հավելյալ արդյունքի հանդես գալուց հետո ռազմագերիներին ստրուկ դարձնելը շահավետ դարձավ: Հայկական բարձրավանդակում ծագեցին ստրկատիրական հարաբերությունները:

Հողագործական և անասնապահական արտադրությունների զարգացմանը զուգընթաց ծավալվեցին նաև մարդկային գործունեության նոր տեսակներ: Անասնապահական և հատկապես հողագործական համայնքներում ու ցեղերում զարգացավ արհեստագործական արտադրությունը: Համայնքի ներսում առանձնանում էն մարդիկ, որոնց մասնագիտությունը արհեստն է դառնում:

Գյուղատնտեսությունից արհեստի անջատումը դարձավ աշխատանքի երկրորդ խոշոր հասարակական բաժանումը: Վերջինս էլ ավելի ընդարձակեց փոխանակության ոլորտը: Հողագործական և անասնապահական արտադրանքի հետ միասին փոխանակման առարկա էին դառնում նաև արհեստագործական ապրանքները: Ապրանքների արտադրությունը սկիզբ է առել ավելի վաղ, բայց միայն այժմ՝ աշխատանքի երկրորդ խոշոր հասարակական բաժանումից հետո, որը տեղի ունեցավ մ. թ. ա. III հազարամյակում, այն դարձավ ավելի մշտական ու կայուն:

Որոշ ուսումնասիրողներ փոխանակության ծագումը բացատրում են ոչ ճիշտ: Այսպես, Վ. Մ. Մասսոնը գրում է. «Փոխանակությունը ծագում է ոչ թե ապրանքային արտադրության զարգացման կամ համայնքներում ավելցուկի հանդես գալու շնորհիվ», այլ փոխանակության գոյությունը պայմանավորված է կենսական անհրաժեշտությամբ: Նա փոխանակության հիմքը համարելով համայնքների բնակատեղիների էկոլոգիական տարատեսակությունը և այլ շրջանների հումքային տարբեր աղբյուրների գոյությունը, նշում է, որ փոխանակության համար անհրաժեշտ այս գործոնները հենց կենսական անհրաժեշտություն առաջացրին տարբեր համայնքների միջև փոխանակության ծագման համար: Վ. Մ. Մասսոնը մոռանում է, որ փոխանակության համար «անհրաժեշտ» հեղինակի նշած երկու գործոնները գոյություն են ունեցել նաև մինչև ապրանքային փոխանակության հանդես գալը, սակայն արտադրողական ուժերի զարգացման աստիճանը օրյակտիվ պայմաններ չի ստեղծել փոխանակության ծագման համար:

Փոխանակության առևտրի վերաճման կարևորագույն պայման հանդիսացավ արժեքի ընդհանրական համարժեքային ձևերի առաջին տարբերակների հանդես գալը, ինչպես հայտնի է, իրերը իրենք իրենց ապրանքներ չեն, այլ այդպիսին դառնում են միայն փոխանակության շրջանում: Կ. Մարքսը նշում է, որ «փոխանակության ծավալման ու խորացման պատճառով պրոցեսը զարգացնում է սպառողական արժեքի ու արժեքի այն հակադրությունը, որը ներհում է ապրանքային բնության մեջ: Այդ հակադրությունը շրջանառության համար արտաքին արտահայտությունն է: Պատճառն այն է, որ արժեքի հակադրությունը չի լուծում ապրանքն ապրանքի ու փողի երկատվելու միջոցով: Հետևաբար, նույն այն շափով, որ շափով իրականանում է աշխատանքի արդյունքների փոխարկումը ապրանքների, իրականանում է նաև ապրանքի փոխարկումը փողի: Ազգագրական և հնագիտական փաստերը վկայում են, որ երրորդ հազարամյակի վերջերին առաջավոր Ասիայի երկրներում ընդհանրական համարժեքի դեր են կատարել

<sup>1</sup> Տե՛ս, Օ. Խնկիկյան, Արհեստների բրոնզեդարյան Հայաստանում, Ե., 1977:

<sup>2</sup> Տե՛ս В. М. Массон, Обмен и торговля в первобытную эпоху.—«Вопросы теории», 1973, № 1, էջ 81:

մետաղյա զանազան իրերը, ինչպես նաև Հայկական բարձրավանդակի ոսկերչական արտադրանքը<sup>3</sup>:

Փողի ապրանքի որոշակի ձևի հետ սերտաճման օրինաչափությունը բնութագրվել է Կ. Մարց-սի կողմից, որ այդ սերտաճումը տեղի է ունենում ելամ այն առարկաներից ամենակարևորի հետ, որոնք փոխանակության միջոցով ստացվում են դրսից և իսկապես ներկայացնում են տեղական արդյունքների փոխանակային արժեքի երևան գալու բնաճուն ձևը, կամ սերտաճում է սպառման այն առարկայի հետ, որը տեղական օտարելի գույքի գլխավոր տարրն է կազմում, ինչպես, օրինակ, անասունները<sup>4</sup>: Առաջավոր Ասիայի երկրներում, այդ թվում և հավանաբար Հայաստանում, որպես փողի ֆունկցիա հանդես եկող «տեղական և օտարելի գույքի» թվում հիշատակվում է հացահատիկը, որը հետագայում դուրս մղվեց պղնձի և արծաթի կողմից<sup>5</sup>:

Փոխանակության զարգացման և առևտրի նրա վերածման համար բացառիկ նշանակություն ունեցավ մետալուրգիայի, առանձնապես բրոնզի համաձուլվածքի տարրեր տեսակների հանդես գալն ու նրանց ծավալումը: Այդ բանը միահամուռ ձևով նշում են բոլոր ուսումնասիրողները<sup>6</sup>:

Մ. թ. ա. երկրորդ հազարամյակի ասուրական սեպագիր արձանագրություններից իմանում ենք, որ Հայկական Տավրոսի հարավային փեշերին Սասունը առաջին տեղն էր զբաղում հին աշխարհում կապարի, անագի պաշարների տեսակետից: Մուսասիրը ամենահարուստն էր պղնձի պաշարներով ու հանույթով<sup>7</sup>: Մշտունյաց լեռներն էլ կապարի, պղնձի և երկաթի հումքերով: Հայոց հին պատմության մեջ այս լեռները կոչվում են «կապարահատաց և երկաթահատաց լեռներ», այնպես, ինչպես կիլիկյան Տավրոսի սարերը ասուրական արձանագրություններում կոչվում են «արծաթյա»: Արճիճի պաշարներով առանձնանում է Շուպրիան (այժմյան Սասունի լեռները), որն այդ տեսակետից մրցակից չունի: Հնարավոր է, որ այստեղ եղել են նաև անագի հանքեր<sup>8</sup>:

Գտնվելով Արևմուտքի և Արևելքի միջև, Հայկական բարձրավանդակը Արևմուտքի համեմատաբար ցածր զարգացած շրջանները կապում էր հինարևելյան քաղաքակրթության կենտրոնների հետ: Չնայած երկրի բնական պայմանների առանձնահատկություններին (նեփիֆի կորտվածություն, լեռնային պատենշների առկայության և այլն), Հայաստանով էին անցնում հին աշխարհի կարևոր տարանցիկ ուղիները, որոնցով կապ էր ստեղծվում Հին Արևելքի, էգեյան աշխարհի, Հյուսիսային Կովկասի ու Հարավ-ուսաստանյան տափաստանների միջև: Հայկական բարձրավանդակը ուներ ճյուղավորված հաղորդակցման ճանապարհներ, որոնք միմյանց էին կապում ինչպես երկրի առանձին մասերը, այնպես էլ կապ էր ստեղծում հարևան պետությունների հետ: Այդ հին ճանապարհի հետքերն այժմ էլ որոշ շափով պահպանվում են: Այդ ճանապարհները, որոշ դեպքերում լեռնային ճանապարհներ էին, անգամ անցնում էին կիրճերով: Հին ճանապարհների հատվածներ կարելի է տեսնել Կամոյի շրջանում<sup>9</sup> (Գավառագետի կամրջով անցնող ճանապարհը), Վան և Ուրմիա լճերի միջև ընկած լեռներում, Կելյաշին և Տոպուզավա հուշարձանների շրջանում և այլն<sup>10</sup>, Նշված հին ճանապարհների գերակշռող մասը անեցել է 1,7—3,5 մետր լայնություն, որը անշուշտ մեզ պատկերացում է տալիս ինչպես ուրարտական, այնպես էլ միջուրարտական ժամանակաշրջանի փոխադարձիջոցների մասին:

Արտադրողական ուժերի զարգացման աստիճանով ու աշխարհագրական դիրքով էր պայմանավորվում, որ դեռևս էնոլիթի ժամանակաշրջանում Հայկական բարձրավանդակի ցեղային միությունները արտաքին ապրանքափոխանակության մեջ էին ինչպես Առաջավոր Ասիայի պետությունների, այնպես էլ հյուսիս գտնվող ցեղերի հետ: Ենթադրվի ու Գտնելի կոթառավոր սեպաձև կացիկների առկայությունը շորրորդ հազարամյակի երկրորդ կեսին և երրորդ հազարամյակի առաջին կեսին Շուճերում մի կողմից և բրոնզից պատրաստված իրերի գոյությունը երրորդ

<sup>3</sup> Տե՛ս «Հայ ժողովրդի պատմություն», հ. 1, Ե., 1971, էջ 377:

<sup>4</sup> Տե՛ս Կ. Մարցս, Կապիտալ, հ. 1, էջ 93:

<sup>5</sup> Տե՛ս Ю. Я. Перепелкин. О деньгах в древнейшем Египте, «Древний Египет», М., 1960, с. 162—168; И. М. Дьяконов. Общественный и государственный строй древнего Двуречья, М., 1959, с. 47—72.

<sup>6</sup> Տե՛ս օրինակ, Г. Чайлд. Прогресс и археология, М., 1949, с. П4; Т. Д. Кларк. Доисторическая Европа, М., 1959, էջ 257:

<sup>7</sup> Տե՛ս Н. Б. Янковская. Некоторые вопросы экономики ассирийской державы, «Вопросы истории», 1956, № 1, էջ 28—40:

<sup>8</sup> Տե՛ս И. Мурье, К. Ляпунова, М. Матье, Б. Плотовский, Н. Флитнер. Очерки по истории техники древнего Востока, էջ 84, 170:

<sup>9</sup> Տե՛ս Գ. Ա. Միխայլյան, Սևանի ավազանի կիկլոպյան ամրոցները, Ե., 1963, էջ 19—20:

<sup>10</sup> Տե՛ս Б. Б. Пиотровский, История и культура Урарту, М., 1944, էջ 211:

հազարամյակի վերջին Կուրանի մարզում մյուս կողմից ուղղակիորեն մասնացույց է անում Հայկական բարձրավանդակի դերն ու նշանակությունը հինարեւելյան մշակույթի զարգացման ու տարածման ուղիներում:

Կամոյում գտնված նիզակի գեղարդը իր զուգահեռներն ունի Միջագետքի, Արևելյան Փոքր Ասիայի, Վրաստանի, Կուրանի դամբարանային հուշարձաններում, իսկ Կիրովականում գտնված գեղարդը՝ գերազանցապես հարավային Միջագետքի քաղաքներում, Իրանի և Վրաստանի հնավայրերում հայտնաբերված նյութերի մեջ<sup>11</sup>:

Ըստ հնագիտական նյութերի, Լենինականից, Երևանից և այլ վայրերից գտնված կոտցավոր կացիների տեսակներն են գտնվել Եվրոպայի հնավայրերից, մի բան, որ վկայում է Հայկական լեռնաշխարհի մետաղագործական արտադրանքը Կովկասի վրայով Եվրոպա թափանցելու մասին<sup>12</sup>:

Հայաստանի վաղ բրոնզեդարյան մշակույթի վերջին փուլում, մ. թ. ա. երրորդ հազարամյակի վերջերին հանդես են գալիս խողովակակոթառ մարտական կացիներ (Լենինական, Սևան և այլն), որոնց նախատիպերը հանդիպում են Եռամերի հին քաղաքներում (Քիչ, Ուր, Լազաշ) և ապա տարածվում Իրանական սարահարթ, Կովկաս, Կենտրոնական Ռուսաստան և Մերձդանուբյան շրջաններ<sup>13</sup>:

Այդ ժամանակաշրջանի մշակութային և տնտեսական փոփոխարարությունյան մեջ որոշակի նշանակություն ունի Տիգրիսից Ինգոս, Օբատսից ու Եփրատից Նեղոս սարավանդի հին առևտրական լայն ցանցը<sup>14</sup>, որի մեջ լուսվին ընդգրկված էր Հայկական բարձրավանդակը Եփրատ-տիգրիսյան և Արարատյան նշանավոր իր ճանապարհներով, և որ գլխավորն է, իր նյութական արտադրության բավականին բարձր մակարդակով: 5—4-րդ հազարամյակների նյութական արտադրության մեջ հայտնի էին արդեն կանեփե կամ վուշե գործածքներ, որոնց հայրենիքը ուսումնասիրողները համարում են Հայկական Բարձրավանդակը: Ապրանքափոխանակության վաղ ժամանակաշրջանում նշված գործածքները հանդիսանում էին Հայկական բարձրավանդակի ցեղային միությունների արտահանման առարկաներից և լայն տարածում գտան Առաջավոր Ասիայի, Եգիպտոսի և Միջերկրածովյան տարբեր մարզերում<sup>15</sup>:

Չունենալով պղնձի հանքավայրեր, հին շումերները օգտվում էին Ամանի, Փոքր Ասիայի, Հայկական լեռնաշխարհի պղնձից: Տավրոսի, Ռշտունյաց, Տայոց, Սասն, Կորճայքի (Ջուլամերկի) օարերն ու Հայկական Միջագետքը (Արդանա-մադեն) պղնձի, կապարի անսպառ շտեմարաններ էին<sup>16</sup>, Գեոևս Լենուլիթի ժամանակ V—IV հազ. Հայաստանը հարեան երկրներ է արտահանել պղինձ<sup>17</sup>:

Խեթական թագավորության հետ Հայկական լեռնաշխարհի ցեղային միությունների տնտեսական կապերի մասին վկայություններ հնագիտական նյութերը տալիս են սկսած մ. թ. ա. 14-րդ դարից: Այսպես, 1960—61 թթ. Արթիկի դամբարանների պեղումների ժամանակ գտնվեցին բրոնզե կացիներ, որոնք հնագիտության կարծիքով, ունեն խուրիտական ծագում: Այստեղ գտնված մեկ այլ տեսակի երկաթյա կացիներ, որը ծառայել է որպես զենք, հնագիտների կողմից համարվեց Ուզարիտական և վերաբրվեց XVIII—X դ. մ. թ. ա.<sup>18</sup>, Նման երկաթյա կացիներն են գտնվել Փյունիկիայում, Սիրիայում և Պաղեստինում. մի բան, որ վկայում է Հայկական բարձրավանդակի ցեղային միությունների, Առաջավոր Ասիայի և Միջագետքի երկրների հետ ունեցած տնտեսական կապերի մասին:

Ավելի ուշ շրջաններին է վերաբերում (XVI—XV դդ. մ. թ. ա.) Բշևանում գտնված արդեն ոչ թե ռազմական— այլ շքերթային կամ կրոնական ծիսակատարությունների ժամանակ օգտագործվող, կտրող մասի վրա երկու անցք ունեցող փոքրիկ երկաթյա կացիներ էգեյան ծագմամբ<sup>19</sup>, որը

<sup>11</sup> Տե՛ս Ա. Ա. Мартиросян. Армения в эпоху бронзы и раннего железа, с. 29—32.

<sup>12</sup> Նույն տեղում, էջ 31—33:

<sup>13</sup> Տե՛ս Դ. Ա. Куфтин. Материалы археологии Колхиды, Тбилиси, 1956:

<sup>14</sup> Տե՛ս Գ. Чайлд. Древнейший Восток в световых раскопках, М., 1956, с. 258—260.

<sup>15</sup> Տե՛ս Բ. А. Богаевский. История техники, т. 1, ч. I, М.-Л., 1936:

<sup>16</sup> Տե՛ս Н. Б. Янковская. Некоторые вопросы экономики Ассирийской державы, ВБИ, 1956, № 1, с. 29:

<sup>17</sup> Տե՛ս Ա. Ա. Мартиросян. К предистории древнейших этапов культуры Армении,— «Պատմա-բանասիրական հանդես», 1968, № 1, էջ 96, է. Խաճեղադյան, Հայկական լեռնաշխարհի կուլտուրան մ. թ. ա. 3-րդ հազարամյակում, Ե., 1947, էջ 44:

<sup>18</sup> Տե՛ս Գ. А. Апресян. Орудия труда Арктического могильника «Պատմա-բանասիրական հանդես», 1970, № 3, էջ 253:

<sup>19</sup> Տե՛ս Նույն տեղը, էջ 234:

կարելի է դիտել որպես Արևմուտքի հետ Հայկական լեռնաշխարհի ինտենսիվ կապերի արդյունք։ Արթիկից գտնված կացինների մեջ իր առանձնահատուկ տեղն ունի կացնի տեսքով ձեռքի ուրազը, որը ծառայել է որպես աշխատանքի գործիք։ Ձեռքի այս ուրազները գործածության մեջ են եղել Հին Արևելքի արհեստագործական տարրեր բնագավառներում։ Այսպիսի կացիններ պատկերված են նաև Եգիպտոսի 18-րդ դինաստիայի (1580—1345 թթ. մ. թ. ա.) կաշեգործական արհեստանոցը պատկերող հարթաքանդակներում<sup>20</sup>։

Ինչպես տեսնում ենք, երկրորդ հազարամյակից մինչև երկրորդ հազարամյակի կեսերը Հայկական լեռնաշխարհի ներմուծված ապրանքների մեջ մեծ տեսակարար կշիռ են ունեցել աշխատանքային գործիքները։ Այլ երկրների հետ տնտեսական փոխհարաբերությունները անկասկած մեծ դեր են կատարել Հայկական բարձրավանդակի արտադրողական ուժերի զարգացման համար։

Հայկական բարձրավանդակով անցնող քարավանային առևտրական ճանապարհների շնորհիվ, ինչպես տեսնում ենք Հայաստանը բավականին արագ կերպով է ներգրավվում միջազգային ապրանքափոխանակության մեջ։ Այս հանգամանքը իր հերթին նպաստեց այստեղ նախնադարյան համայնական արտադրական հարաբերությունների հետագա քայքայման և դասակարգային հասարակության ծազմանը։ Ավելին, վաղ բրոնզեդարյան ժամանակաշրջանում հանքանյութի և մետաղների ցածր արտադրողականության պայմաններում պղինձը, կապարը, անագը, բրոնզը և նրանցից պատրաստված իրերը արտահանվում էին բարձր գներով<sup>21</sup>, արտաքին ապրանքաշրջանառությունից ստացված բարձր եկամուտները, անշուշտ պետք է նպաստեին հավելյալ արգելների ավելի մեծ քանակի գոյացմանը և դասակարգային հասարակության ձևավորմանը։

Երկրորդ հազարամյակի վերջերում Հայաստանը սերտ տնտեսական կապերի մեջ է մտնում Հյուսիսային Կովկասի հետ։ 1960—61 թթ. Արթիկում կատարված պեղումների ժամանակ գտնվել են XIV—XIII դ. մ. թ. ա. պատկանող արխայիկ տեսք ունեցող դաշույնի երկու բրոնզե շեղբեր։ Նման շեղբերից գտնվել են ինչպես Մեծամորում, այնպես էլ Քաղաքեղում։ Հնագետները նման դաշույններ են գտել Վրացական ՍՄՀ-ի, Օսեթիայի, Գաղստանի, Կրասնոդարի մարզի, Չեչենոսեղովիայի, Մայկոպի դամբարանադաշտերից։ Ե. Ն. Չերնիխի կարծիքով Մայկոպի մետաղե իրերի բաղադրությունը համապատասխանում է Լափանի պղնձահանքի բաղադրությանը<sup>22</sup>։ Նման հանգամանքը կարող է մատնացույց անել, որ հյուսիս-կովկասյան մետաղե իրերը պատրաստի վիճակում կամ ձուլուկների ձևով ներմուծվել են Անդրկովկասից։ Շրջանակավոր դաստակ ունեցող դաշույնները Հայկական լեռնաշխարհում երևան են եկել միջին բրոնզի դարաշրջանի առաջին փուլի վերջում և երկրորդ փուլի սկզբում, շարունակելով իրենց գոյությունը պահպանել մինչև մ. թ. ա. 9—8 դարերում<sup>23</sup>։ Նման դաշույններ գտնվել են նաև Եգիպտոսում (18-րդ դ. մ. թ. ա.), Ասորեստանում, Ուգարիտում, որոնք թվագրվում են մ. թ. ա. 14—12-րդ դարերով<sup>24</sup>։ Որ դարաշրջաններին էլ դրանք վերագրվեն, մի բան ճիշտ է՝ Հայաստանը կատարել է յուրտեսակ շարժափոկի դեր՝ հարավի ավելի զարգացած մշակույթը հյուսիս փոխանցելու գործում, մյուս կողմից էլ այն մատնացույց է անում Հայաստանի սերտ, անմիջական շփումը Առաջավոր Արևելքի ու հյուսիսի հետ։

Հայաստանի արտաքին ապրանքափոխանակության մեջ մեծ տեսակարար կշիռ է ունեցել զենքի փոխանակությունը։ Հայաստանի բրոնզեդարյան դաշույնների որոշ տարրերակներ կապվում են Ասորիքի, Հյուսիսային Միջագետքի, Լեներոսանի, Արևմտյան Իրանի, (Լուրիստանի (մ. թ. ա. XIII—X դդ.) նյութերի հետ։ Արթիկի փոքրիկ զարդարուն սակրը<sup>25</sup> համընկնում է Ասորիքի այն նյութերին, որոնք թվագրվում են եգիպտական Ռամզես Գ փարավոնի (1204—1173 թթ.— մ. թ. ա.) թագավորական շրջանի մակագրություններով։

Հնագիտության կարծիքով լճաշենի դաշույնների և դանակների մեծ մասը, ինչպես նաև բրոնզե մեծ եռաժանիներն ու բազմաթիվ այլ իրեր անմիջականորեն կապված էին առևտրական Ուգարիթ թաղաքի մետաղյա այն իրերի հետ, որոնք իրենց վրա կրում են եգիպտական Մերնեպ-

<sup>20</sup> Տե՛ս Ս. Лурве, К. Ляпунова, М. Матье, Б. Пиотровский, Н. Флетнер. Очерки по истории техники древнего Востока, М.-Л., 1940, էջ 21։

<sup>21</sup> Տե՛ս Գ. Капанця, Хайаса—колыбель армян, Е., 1947, с. 100—101.

<sup>22</sup> Տե՛ս Ե. Н. Черных. История древнейшей металлургии Восточной Европы, М., 1966, с. 46, 72.

<sup>23</sup> Տե՛ս С. А. Есяян, Оружие и военное дело древней Армении, Ер. 1964, էջ 32; Կ. С. Хачатрян. Древняя культура Ширака, Е., 1981.

<sup>24</sup> Տե՛ս «Հայ ժողովրդի պատմություն», հ. 1, էջ 294։

<sup>25</sup> Տե՛ս Կ. С. Хачатрян. Материальная культура Армении, Е., 1963, с. 57, աղ 3, էջ 3։

տած փարավոնի անունը (XIII դ. մ. թ. ա.)<sup>26</sup> կամ խեթական Ասորիքի Քիւ-Ահմար քաղաքի ունիթների հետ, որոնք թվագրվում են ասորական թագավոր Սալմանասար Ա-ի տիրապետության տարիներին (1280—1261 թթ. մ. թ. ա.): Լճաշենի և Կիրովականի հարուստ դամբարաններից հնագետները հայտնաբերել են լայնաշղթր դաշույններ բրոնզե պատյաններով<sup>27</sup>, որոնք հիշեցնում են Բաբելոնի իշխանության տակ գտնվող Միջագետքի նշանավոր ասորական-արդյունաբերական կենտրոն Ուր քաղաքի պեղումների ընթացքում հայտնված ոսկյա պատյանի մշակված ձևերը<sup>28</sup>:

Փոխանակության և ասորի զարգացման մեջ որակական նոր սահման հանդիսացավ վաղ դասակարգային հասարակության դարաշրջանի ասորերը: Այստեղ առաջատար տնտեսական ձև է դառնում դրամական ասորերը ըստ Փ—Ա—Փ բանաձևի, ընդ որում փողի ֆունկցիան կատարում էին ազնիվ մետաղները: Առանձնացված տնտեսական այս գործունեության սպասարկման համար, առանձնանում է վաճառականների խավը, քաղաքային տիպի խոշոր բնակավայրերը դառնում են շուկաներ:

Նշված դարաշրջանում լայն փոխանակության առարկա է եղել ոսկերչական արտադրանքը: Հայաստանի ոսկերչական արտադրանքը հանդիպում է Կենտրոնական և Հյուսիսային Միջագետքի մ. թ. ա. XIV—XIII դդ. վաղ ասորեստանյան հնավայրերում, մասնավորապես Մարի քաղաքի հարուստ դամբարաններում<sup>29</sup>: Հավանաբար Հայաստանի ոսկերչական արտադրանքը Առաջավոր Ասիայի զարգացած երկրներում կատարում էր ընդհանրական համարժեքի դեր: Գրավոր ազդրույններ վկայում են, որ ասորեստանցիները, Առաջավոր Ասիայի երկրներից ստանում էին գլխավորապես ձուլյա ոսկի, արծաթ, պղինձ, կապար (անագ) և երկաթ<sup>30</sup>: Այս փոխանակության մեջ անկասկած իր տեղն է ունեցել նաև Հայկական լեռնաշխարհը:

Առաջավոր Ասիայի երկրների միջև ծավալված միջազգային ասորի վկայությունն է հանդիսանում նաև բոլոր այդ երկրներում կռիվ միևնույն միավորի ձևերի կիրառությունը: Բայր երկրների ձևերի-ները տատանվում էին 491,5-ից մինչև 511,4 գրամի: Ասորականը հավասար էր 505 գրամի, Բ. Բ. Պիտրովսկու կարծիքով նույն կշիռն ուներ նա Ուրարտական ձևերին, Գեոևս երրորդ հազարամյակի սկզբներին ասորական թագավոր Սարգոն Հինը ձգտում էր Առաջավոր Ասիայի բոլոր երկրներում սահմանել ձևերի-ն կայուն կշիռ<sup>31</sup>: Ուսումնասիրողները ենթադրում են, որ Արամոյան Ասիայում գոյություն է ունեցել վաղ երկաթի երկու լեռնամետալուրգիական մարզեր, Արամոփոքրասիական և Արամենոկովկասյան<sup>32</sup>: Վերջինս ընդգրկում է Հայկական բարձրավանդակը և Հարավային Կովկասը, ինչպես նաև Խատտի և Խատտինա երկրները: Անկասկած է, որ վաղ երկաթի Արամենոկովկասյան մարզը, չէր կարող զարգանալ մյուս լեռնամետալուրգիական մարզերից կտրված: Արամենոկովկասյան լեռնամետալուրգիական մարզերից էր, որ Ասորեստանը և հարևան մյուս երկրները դեռևս 9-րդ դ. մ. թ. ա. ստանում էին երկաթ<sup>33</sup>, որը նպաստեց ինչպես Առաջավոր Ասիայի, Կովկասի արտադրական ուժերի զարգացմանը, այնպես էլ այս շրջանում աշխատանքի արտադրողականության բարձրացմանը: Երկաթյա աշխատանքների գործիքների նկատմամբ պահանջարկի աճը, պիտի դրևորվի անշուշտ արտաքին տնտեսական կապերի ընդլայնման միջոցով: Գերմանացի ուսումնասիրող Գերցֆելդը ելնելով Սարգոնի՝ Մուսասիրի մասին արձանագրություններից, գտնում է, որ Սարգոնի պայլատից գտնված մետաղյա իրերի հայրենիքը ամենայն հավանականությամբ Ուրարտուն է<sup>34</sup>: Շախնյամեյերը նշում է, որ Առաջավոր Ասիայի արևելքում Ուրարտական մշակույթի առանձնահատկությունը մետաղագործության բարձր զարգացումն է: Ուրարտական մետաղի իրերը Շախնյամեյերի կարծիքով արտահանվում էին հյուսիս (Մալկոպ և այլն), դեպի Սիրիա և Միջագետք (Կարխեմիշ, Ասորեստան), ինչպես նաև Մեդիա, Իրան և Առաջավոր Ասիայի արևմտյան երկրներ՝ մինչև էգիպյան ծով: Պղինձ կար էրգրումից հարավ-արևելք հեռուի շրջանում, Երզնկայից հարավ գտնե-

<sup>26</sup> Տե՛ս «Հայ ժողովրդի պատմություն», հ. 1, էջ 206:

<sup>27</sup> Տե՛ս А. О. Мнацаканян. Раскопки курганов на побережье оз. Севан в 1956 г., СА, 1957, № 2.

<sup>28</sup> Տե՛ս Н. Д. Флитнер, Культура и искусство Двуречья, М.-Л., 1958, էջ 49:

<sup>29</sup> Տե՛ս «Հայ ժողովրդի պատմություն», հ. 1, էջ 207:

<sup>30</sup> Տե՛ս նույն տեղը, էջ 377:

<sup>31</sup> Տե՛ս В. Б. Пиотровский. История и культура Урарту, էջ 200:

<sup>32</sup> Տե՛ս Г. А. Арешян. Древнейшие центры металлургии железа в Армении и Иране, ИИИ, 1974, № 3, էջ 132:

<sup>33</sup> Տե՛ս Բ. Առախյան, Քաղաքները և արհեստները Հայաստանում 9—10-րդ դդ., հ. 1, էջ 52:

<sup>34</sup> Տե՛ս В. Б. Пиотровский, История и культура Урарту, էջ 215:

վող լեռներում, ինչպես նաև Ուրմիա լճից արևմուտք ընկած լեռներում: Հավանաբար հենց այս վերջին վայրում էլ կենտրոնացված էր ուրարտական պղնձի մետալուրգիան (Մուսասիրում): Հայաստանը հարուստ էր նաև կապարով: Կապար կար Ուրմիա լճի արևմուտքում (Սոխենդ քաղաքի մոտ), որը մտնում էր Վանի թագավորության մեջ: Արճիճ կար Վանա լճի արևելքում, ինչպես նաև նեոկալիթ Զուլամերիկ քաղաքի շրջակայքում<sup>35</sup>: Առաջավոր Ասիայում մետաղյա իրերը հանդիսանում էին փոխանակության հիմնական առարկա, որոշ դեպքերում էլ հանդես էին գալիս որպես ընդհանրական համարժեք (օրինակ որոշակի քաշի ապարանջանը)<sup>36</sup>:

Հայաստանում դեռևս վաղ երկաթի դարաշրջանում ստրկատիրական արտադրական հարաբերությունների, արհեստի և առևտրական փոխանակության զարգացման հետ զուգընթաց մանր համայնքային բնակավայրերը միավորվեցին և փոխարկվեցին ինքնավար քաղաքային-ագրարային տնտեսություն ունեցող համայնքների, միաժամանակ հանդիսանալով մասնագիտական արհեստի և առևտրի կենտրոններ: Հավանաբար Ուրարտուի հարավ և հարավ-արևելյան շրջաններում գտնվող քաղաքները հանդիսացել են Միջագետքի և Նրանից հարավ ընկած երկրների արհեստագործական արտադրանք մատակարարող քաղաքներ: Ընդ որում արհեստագործական արտադրանքը փոխանակել են ազնիվ մետաղյա իրերի հետ<sup>37</sup>: Արծաթյա իրերի առատությամբ այդքի են ընկել Ասորեստանը, Ուրարտուն և Խարխին: Հողագործական-անասնապահական առաջին երկու մարզերում մետաղյա մշակման բարձր զարգացումը հաստատվում է հնագիտական պեղումներով<sup>38</sup>: Այս երկրները մետաղամշակության համար անհրաժեշտ հումքը ստանում էին լեռնային շրջաններից (Շուպրիայից, Մուսասիրից, Գիլգանից): Մուսասիրում եղել է պղնձի մշակում, որտեղից և գտնված՝ գեղարվեստական արհեստի մեծ քանակի արտադրանք: Անկասկած մետաղամշակման այս կենտրոնը եղել է նաև աշխատանքային գործիքների արտադրության կենտրոն: Երկաթը հիշատակվում է միայն Շուպրիայում և Խալդեայան մարզերում<sup>39</sup>:

Պղինձը և արձիճը հիշատակվում են մի շարք երկրներում, այդ թվում՝ Շուպրիայում, Մուսասիրում և Գիլգանում: Պղնձի պաշարներով Մուսասիրի հարուստ լինելը, անկասկած, տեղական հումքի առկայությունից էր, իսկ այս հանգամանքը պայմանավորեց նրա ստարանցիկ առևտրի կենտրոն դառնալուն: Ուսումնասիրողների կարծիքով Շուպրիան ևս ունեցել է պղնձի իր հանքավայրը<sup>40</sup>:

Ք. Ք. Պիտրովսկու կարծիքով Հյուսիսային Կովկասի սկյուրները մ. թ. ա. 7-րդ դ. Անդրկովկասի միջոցով Հնագույն Հայաստանից ստանում էին երկաթ: Սա հաստատվում է Կարմիր բլուրի պեղումներով: Այստեղ գտնվել են ձիու երկաթյա սանձ սկյութական ոսկրյա կալզաններով, բրոնզե եռաշերտ վերադիրներ սկյութական ձևի և այլն: Այստեղ գտնված են նաև զանազան կնիքները. սարդոնե և թանկարժեք քարերով ասուրական ուլունքները վկայում են Հին Արևելքի երկրների հետ Հայաստանի ունեցած կապերի մասին: Իսկ գտնված մ. թ. ա. VIII—VII դդ. ոսկյա ականջօղեքը վկայում են Միջերկրական ծովին առընթեր երկրների հետ տնտեսական կապերի մասին:

Կարմիր բլուրում գտնված երկաթյա իրերից գտնվել են նաև Անդրկովկասում պեղված մ. թ. ա. VII—VI դարերի դամբարաններից, որը հիմք է տալիս ենթադրելու Վանի թագավորության հետ Կովկասի երկաթի վերամշակման սկզբնական փուլի սերտ կապի մասին<sup>41</sup>: Արդեն մետաղը դարձավ սովորական փոխանակման առարկա: Այդ կապերն են փաստարկում և Արջաձորի գերեզմանաթմբերից հայտնաբերված նյութերը: Այսպես, Ռեսլեքը իր պեղումների ընթացքում գտել է կենդանիների պատկերներով կնքազանիկ, իսկ Խոշալինյան գերեզմանոցում գտնվեց առյուծի գլխի ոսկյա րեկոր<sup>42</sup>: Հին Արևելքի և Կովկասի ավելի վաղ շրջանի տնտեսական կապերը ցույց են տալիս, ինչպես Մայկոպյան գերեզմանարկուրը, այնպես էլ Քրիայեթի (Սալկայի) միջին բրոնզե դարաշրջանի գերեզմանաթմբերը:

Հնագիտական բազմաթիվ վկայություններ կան, որ Ուրարտուի միջոցով Անդրկովկասը

<sup>35</sup> Տե՛ս, նույն տեղում, էջ 219:

<sup>36</sup> Տե՛ս, նույն տեղում, էջ 236:

<sup>37</sup> Տե՛ս Н. Б. Янковская, Некоторые вопросы экономики Ассирийской державы, ВДИ, 1956, № 1, с. 34.

<sup>38</sup> Տե՛ս Б. Б. Пиотровский, История и культура Урарту, с. 191.

<sup>39</sup> Տե՛ս С. М. Бациев, Борьба между Ассирией и Урарту за Сирию, ВДИ, 1953, № 2.

<sup>40</sup> Տե՛ս Н. Б. Янковская, Некоторые вопросы экономики Ассирийской державы, ВДИ, 1956, № 1, с. 37.

<sup>41</sup> Տե՛ս Б. Б. Пиотровский, Кармир-блур, I, м., 1950, էջ 87:

<sup>42</sup> Տե՛ս Б. Б. Пиотровский, История и Культура Урарту, էջ 91:

կապվում էր Առաջավոր Ասիայի երկրներին հետ, իսկ Անդրկովկասի վրայով Առաջավորասիական երկրները կապվում էին Հյուսիսային Կովկասի և մերձսևծովյան տափաստանների բնակիչների հետ: Հայկական բարձրավանդակում ծավալված ապրանքափոխանակությունը և առևտրի հետևանքով լեռնային շրջանների և սարահարթերի բնակչության ավելի ու ավելի համախալի շրջանակներին հանգեցրին արտադրողական ուժերի բուռն զարգացման: Ծագում են բավականին խոշոր բնակավայրեր: Արդեն մ. թ. ա. առաջին հազարամյակի սկզբներին ստեղծվում են մեծ շափերի հասարակական կառույցներ, երևում են պաշտպանողական պարիսպներ թշնամու հարձակումներից պաշտպանվելու համար, այսինքն ծագում են ջաղաքները: Քաղաքը ամբողջ մարզի բնակչությանը դեպի իրեն ձգող կենտրոն է եղել: Նա մարզի կենտրոնն էր տնտեսական տեսանկյունից, որովհետև նրա միջոցով էր, որ մի կողմից հինարևելյան էկոնոմիկայի երկու՝ պետական և համայնական-մասնավոր սեկտորների և փոխորոշունները կենտրոնացվում էր, մյուս կողմից նրա միջոցով տեղի էր ունենում ինչպես արհեստի և հողագործական, այնպես էլ աշխատանքի բնական բաժանման հետևանքով տարբեր շրջանների միջև բնախրային կամ ապրանքադրամական փոխանակություն:

Միջոցային առևտրի հետ միասին սկսեց գոյություն ունենալ պետական առևտուր: Շտեմարաններում կուտակված հսկա քանակի գյուղատնտեսական մթերքները վկայում են, որ ապրանքներ գնել ու փոխանակել են Ուրարտական թագավորները: Այս նպատակների համար ներքանք օգտագործել են իրենց հսկա հարստությունները ոսկու և արծաթի ձևով, որոնց մասին սեպագիր արձանագրությունները բազմիցս վկայում են: Ապրանքների փոխանակությամբ զբաղվել են նաև ուրարտական տաճարները: Տաճարային տնտեսություններից և ապրանքափոխանակությունից ստացված եկամուտները գնում էին տաճարային միավորումներ ղեկավարող ժրմեթի<sup>43</sup>, Ասուրական աղբյուրները նշում են, որ Սարգոն II-ը Մուսասիրի տաճարից շատ հարուստության հետ միասին թայանել է մեծ քանակի ձուլածո ոսկի և արծաթ, ինչպես նաև պղնձ ու երկաթ: Անկասկած ձուլածո ոսկին ու արծաթը, նաև պղնձի ու երկաթի մի մասը տաճարը ձեռք է բերել առևտրի միջոցով: Հավանաբար Մուսասիրում է գտնվել ինչպես ներքին ապրանքափոխանակության, այնպես էլ միջազգային ալյուրանքափոխանակության կենտրոններից մեկը: Ուրմիա լճից հարավ արևմուտք գտնվող այժմյան Ռևանդոլ քաղաքի շրջանում գտնվել է Իշլուրիսի և Մենուայի մի արձանագրություն, որտեղ որոշակի նշված է. «Արդիսի քաղաքից թող տանեն ազատ մնացած (այսինքն վաճառքի համար հատկացված— Ծ. Ծ.) անասունը, եթե նրա դիմաց տան իրեր»<sup>44</sup>:

Մարդկության խոշոր նվաճումներից մեկը կարելի է համարել մասնագործությունը, ջուլահակությունը, այդ թվում և կապերտագործությունը, որն իր հետագա զարգացումը գտնում է այն ժամանակաշրջանում, երբ երկաթը ընդհանուր գործածության մեջ է մտնում: Ց. Էնգելսը գրում է. «... ոստայնանկությունը, մետաղամշակությունը և հետզհետե միջանցից առանձնացող արհեստներն ավելի ու ավելի բազմատեսակություն և ճարտարություն էին ծավալում շինվածքների արտադրության մեջ»<sup>45</sup>:

Հայաստանում երկաթի գործածության ծավալումը նյայտում է զանազան արհեստների, այդ թվում և մասնագործության, ջուլահակության և կապերտագործության հիմնական և օժանդակ աշխատանքային գործիքների՝ անղի, իրկի, տրոգի, դաղգահի, սանդղերի և ճախարակների հետագա կատարելագործմանը, որոնցով հնարավոր է դառնում վերամշակել ինչպես ուխարի, այժի և ուղտի բուրդը, այնպես էլ կանեփի, կտավձառի և բամբակի բուսական թելերը: Կապերտագործությունը, ինչպես նաև գորգագործության մասին ամենահին պատմական և նյութական փաստերը գալիս են Միջին և Առաջավոր Ասիայից, հետևաբար և Հայաստանի տարածքից: Այսպես 1942 թ. Կարմիր բլուրի պեղումներից հայտնաբերվեցին 21—23 մետր երկարությամբ բրդի և վուլի թելերից գործված մի ուղեկաթի մնացորդներ<sup>46</sup>:

Քսենոֆոնը հիշատակում է «բարբարոսական» գորգերի մասին, որոնք արժեին 10 մնաս (մին)<sup>47</sup>: Հայկական բարձրավանդակում գորգագործության զարգացման պայմանները հետևյալներն են. 1) Հայաստանում կար կենդանական և բուսական անհրաժեշտ բույր տեսակի հումք՝ բուրդը, այժի նուրբ մազը, բամբակը և ներկատու բույսեր: Երկրորդ, Հայկական բարձրավանդակի երկար և դաժան ձմեռների պայմաններում բրդե գործվածքների խիստ պահանջ-մունք կար, հատկապես հատակին փռելու համար, և երրորդ, Հայկական բարձրավանդակով էին

<sup>43</sup> Տե՛ս А. Г. Перихания, Храмовые объединения Малой Азии и Армении, М., էջ 7:

<sup>44</sup> УКН, 19, с. 128.

<sup>45</sup> Ց. Էնգելս, Ընտանիքի, մասնավոր սեփականության և պետության ծագումը, էջ 216:

<sup>46</sup> Տե՛ս Б. Б. Пиотровский, Вестник АН СССР, М., 1942, т. 4, էջ 152:

<sup>47</sup> Տե՛ս Քսենոֆոն, Անարասիս, Ե., 1970, էջ 173:

անցնում միջին և փոքրաթիվական երկրների քարավանային ճանապարհները, որով Հայաստանը գտնւում էր տարանցիկ վաճառականութան համար պարտադիր մի վայր, որը նպաստում էր գորգագործութան և ընդհանրապես արհեստագործութան զարգացմանը:

Միջագետքում Ուրի և Նիպուրի պեղումներից հայտնաբերվել են հացահատիկների բազմաթիվ տեսակներ, որոնց մեջ նաև քնուրթի հատիկներ: Հռոմեական ազբյուրները վկայում են Ասորեստանում և Միջագետքի մյուս երկրներում քնուրթի օգտագործման մասին<sup>46</sup>, Այն հանգամանքը, որ Ասորեստանում և Միջագետքի մյուս սեղաններում քնուրթի յուղն ավելի վաղ է սկսել օգտագործվել, հիմք է տալիս ասելու, որ ուրարտացիները քնուրթը և նրանից յուղի ստացման համար անհրաժեշտ սարքավորումներ ստացել են Միջագետքից:

Միջազգային առևտուրը առանձնապես ծավալվեց Աքեմենյան տիրապետության ժամանակ, երբ արտադրական հարաբերությունների համակարգում տիրապետող էին արդեն ստրկատիրական արտադրական հարաբերությունները: Այդ ժամանակ խորացել էր աշխատանքի հասարակական բաժանումը, առաջադիմել էր արհեստն ու քաղաքային կյանքը, ծագել էր դրամական շրջանառությունը:

Հեռողտի և Քսենոֆոնի վկայությամբ հայերի զբաղմունքի մեջ մեծ տեսակարար կշիռ է ունեցել առևտուրը: Երկիր, որ ուներ այն ժամանակվա համար զարգացած, նյութական արտադրություն, հարուստ էր ինչպես քնակա և ռետուրսներով, այնպես էլ ջրային (Տիգրիս, Եփրատ, Արաքս) ու քարավանային ճանապարհներով շեր կարող շտնենալ աշխույժ առևտրական կապեր շրջապատող երկրների հետ: Բարեկենի հետ հայերի առևտրական կապերի մասին հետաքրքիր մանրամասնություններ ունի Հեռողտը: Հայերը ունենու ճյուղերից պատրաստում էին նավի կողեր, այն պատում էին կաշվով, նավին տալիս էին կլոր տեսք: Գրանից հետո նավը լցնում էին ծղոտով, ապա բարձում էին ու իջեցնում Եփրատ: Բեռը հիմնականում տակառներ էին լրցված գինով: Նավերը լինում էին մեծ և փոքր: Նրանցից ամենամեծի տարողությունը հասնում էր մոտ 5000 տաղանդի (128 տոննա): Բարեկենում բեռը վաճառելով՝ հայ վաճառականները քանդում են նավը և կաշին բարձելով ձիուն կամ էլին՝ վերադառնում էին Հայաստան: Հայ վաճառականները զբաղվում էին ոչ միայն հայրենական ապրանքների վաճառքով, այլև միջերկր էին կովկասի, Կասպից ծովի միջոցով՝ Առաջավոր Ասիայի երկրների և Չինաստանի, Եփրատի վրայով Բարեկենի ու Հնդկաստանի, ինչպես նաև Կապոդովկայի ու Արևելքի երկրների միջև կատարվող առևտրի ժամանակ<sup>49</sup>:

Գրավոր աղբյուրները վկայում են, որ քննարկվող ժամանակաշրջանում արդեն գոյություն է ունեցել փողը և այն ծառայել է որպես հարստության ընդհանրական ձև: Քսենոֆոնի «Կյուրոպեդիայի» մի հատվածում Կյուրոսը արմենների թագավորին հարցնում է. եթե դու մի իշխանավոր ունենաս, որը շատ դրամ ունենա, թույլ կտաս, որ հարստանա՞, թե նրան չքավոր կդարձնես»: Մեկ ուրիշ տեղ արմենների թագավորը իր հարստությունը հաշվում է ավելի քան «երեք հազար տաղանդ արծաթի դրամով»:

Ակնհայտ է, որ Հայաստանի տնտեսական կյանքում նշանակալի դեր են ունեցել արծաթյա փողը և կատարել է իրեն հատուկ գրեթե բոլոր ֆունկցիաները: Փողը արժեքի չափանիշ լինելու հետ միասին, եղել է նաև գների մասշտաբ:

2. Մանանդյանի կարծիքով տաղանդը կշռել է 32 կգ 640 գ արծաթ<sup>50</sup>: «Կյուրոպեդիայում» վկայություն կա, որ փողը կատարել է նաև գանձագոյացման ֆունկցիա (այդ շրջանում Հայաստանում որպես փող հանդես է եկել նաև ոսկին): Կյուրոսի համար արմենների թագավորի կնոջ բերած ընծաների մեջ եղած ոսկու մասին Կյուրոսն ասում է. «... տիկին, առ այդ փողը, որ բերում ես, և զնա, ու այլևս մի տա արմենների թագավորին, որ նա այդ գետնի մեջ թաղես: Փողի գանձագոյացման ֆունկցիան ցույց է տալիս, որ ապրանքաշրջանառությունը գեոևս շատ զարգացած չի եղել, և ոսկին ու արծաթը դառնում են հարստության կուտակման միջոց, որ արտադրություն գեոևս նատուրալ բնութք ունի և հենվում էր սեփական ոպումման վրա<sup>51</sup>: Մակայն, դա չի նշանակում, թե իսպառ ժխտված է ապրանքների առքն ու վաճառքը, այլ միայն երևում է, որ ապրանքաշրջանառությունը դրվել է գեոևս զարգացման ցածր աստիճանի վրա: Ապրանքաշրջանառության գոյության փաստը երևում է Կյուրոսի հետևյալ խոսքերից. «... ցան-

<sup>46</sup> Տե՛ս Геродот, История в девяти книгах, Л., 1972, էջ 72:

<sup>49</sup> Տե՛ս Г. А. Халатяни, Очерк истории Армении в связи с общим ходом событий в Передней Азии, М., 1919, էջ 98—99:

<sup>50</sup> Տե՛ս Հ. Մանանդյան, Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, Ե., 1944, էջ 404:

<sup>51</sup> Տե՛ս Կ. Մարտ, Կապիտալ, հ. 1, էջ 140—141:



